ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼԻԼԻԹ ԳՈՒՐԳԵՆԻ

ՍԹՐԵՍԻ ՀԱԿԱԶԴՈՒՄՆԵՐԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԹ 00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր՝ **Կամո Երեմի Վարդանյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր՝ **Մելս Պարգևի Մկրտումյան**
	Հոգեբանական գիտությունների դոկտոր՝ **Արսեն Բաղդասարի Լոքյան**
Առաջատար կազմակերպություն՝	Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. ապրիլի 11-ին ժամը 12^{00}-ին, Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում

Սեղմագիրն առաքվել է 2019թ. մարտի 1-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր՝ **Կամո Երեմի Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Սթրեսներն անխուսափելի և բնականոն երևույթներ են և հանդիսանում են մի շարք գիտական բնագավառների մշտապես արդիական հիմնախնդիրներից:

Այսօր մեր երկրի հասարակությունը ապրում է անցումային շրջանում, որն իրենից ներկայացնում է անոմիայի վիճակ: Իսկ նման ժամանակահատվածը սովորաբար նպաստում է լրացուցիչ լարվածության և սթրեսների առաջացմանը:

Ներկայումս գոյություն ունի այնպիսի մեծածավալ և երբեմն իրարամերժ տեղեկատվության հոսք, որից մարդը կամա-ակամա հայտնվում է ինֆորմացիոն սթրեսի մեջ: Սթրեսի հակազդումները ունենում են այսօր շատ երկրներում համաճարակային դարձած դեպրեսիաների, տարբեր մարմնական խնդիրների, քրոնիկ հոգնածության և այլ դրսևորումներ: Սթրեսի մեխանիզմները, նպաստող պայմանները, գործոնները, հակազդման պայմանները բավարար հետազոտված չեն, հատկապես էթնոմշակութային համատեքստում: Ներկայումս գտնում են, որ սթրեսը և դրա հակազդումները ունեն մշակութային պայմանավորվածություն, իսկ առավել կայուն մշակութային միավորներ են էթնիկ խմբերը: Հայերի և մեր երկրում բնակվող այլ էթնիկ խմբերի վերաբերյալ նմանատիպ սակավաթիվ հետազոտությունները թույլ չեն տալիս կանխատեսումներ անել այդ հակազդումների ճիշտ բացահայտման ու դրանց հետևանքով առաջացող բարդացումների կանխարգելման ուղղությամբ, ինչն էլ նպաստեց ուսումնասիրելու տվյալ հիմնախնդիրը:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Սթրեսի մասին գիտական պատկերացումներ եղել են դեռ մինչ Հ.Սելյեն, ում կողմից սթրեսի՝ որպես ընդհանուր ադապտացիոն սինդրոմի մասին հետազոտությունները նոր թափ հաղորդեցին այս երևույթի ուսումնասիրմանը: Նրանից սկսած՝ սթրեսի բազմակողմանի ուսումնասիրում են իրականցրել Լ.Կիտաև-Սմիկը, Յու.Շչերբատիխը, մեր հայրենակիցներ Ս.Սուքիասյանը, Ա.Թադևոսյանը և ուրիշներ, ովքեր անդրադարձել են սթրեսի պատճառով հարմարվողական պաշարների սպառման հետևանքով առաջացող խանգարումներին և հիվանդություններին, նրանք նաև նշում են առաջ եկող ֆիզիոլոգիական, պերցեպտիվ-կոգնիտիվ, վարքային և հուզական փոփոխությունների մասին:

Հոգեվերլուծության մեջ անմիջապես սթրեսին չեն անդրադարձել, բայց այս մոտեցման շրջանակներում սթրեսի մեկնաբանությունը ելնում է անձի «Գեր-Ես»-ի և «Այն»-ի միջև պայքարի դիրքերից, որի արդյունքում հոգեբանական պաշտպանական մեխանիզմները չեն կարողանում դիմակայել տրավմային, և առաջանում է նևրոտիկ տագնապ: Կոգնիտիվիստական մոտեցման շրջանակներում սթրեսի ուսումնասիրման հարցում նշանակալի ներդրում են կատարել Ռ.Լազարուսը, Ս.Ֆոլկմանը, ովքեր կարևորում են ազդակի՝ որպես սթրեսորի ձևավորման գործընթացում անձի անհատական տարբերությունները և սթրեսորի ու

վերջինիս հակազդման միջև մտցնում են հոգեբանական բնույթի փոփոխականներ: Այս մոտեցման շնորհիվ սթրեսը ֆիզիոլոգիական երևույթից դարձել է հոգեբանական: Հետագայում սթրեսի դիտարկումը Ռ.Լազարուսի և Ռ.Լաունիերի կողմից նոր դաշտ է բերվում՝ շրջապատի հետ մարդու փոխազդեցության արդյունք դարձնելով: Այս մոտեցմանն է հարում նաև սթրեսի ինտերակցիոնիստական մեկնաբանությունը, որի ներկայացուցիչներ Ջ.Մըք Գրաթը, Ի.Սարասոն գտնում են, որ սթրեսն առաջ է գալիս, երբ անձի կողմից գիտակցվում է անհավասարակշռությունը, որը առկա է միջավայրի պահանջի և օրգանիզմի հնարավորությունների միջև: Թ.Հոլմսը, Ռ.Ռահեն, Գ.Բրաունն ու Թ.Հարիսը սթրեսների առաջացման և զարգացման գործում կարևորում են հենց ազդակները՝ որպես կյանքի իրադարձություններ:

Սթրեսի մարմնականացման հարցը լայնորեն ուսումնասիրվել է հոգեմարմնական հիվանդությունների շրջանակներում: Անշուշտ, մարմնականացման հիմքում ընկած է դեռ Զ.Ֆրեյդի կողմից առաջարկված «կոնվերսիայի» գաղափարը, որի վրա հենվում են հոգեդինամիկ ուղղության այլ ներկայացուցիչներ՝ Ֆ.Դանբարը, Ջ.Մըք Դագլը, Ֆ.Ալեքսանդերը: Թ.Հոլմսն ու Ռ.Ռահեն այս հարցում ընդգծում են սոցիալական և սոմատիկ ոլորտների միջև կապը:

Սթրեսների և ինքնասպանությունների կապն ուսումնասիրել է հոգեբանական գիտությունների դոկտոր Կ.Ե.Վարդանյանը, ով սթրեսների դերը կարևորում է նաև այլ աուտոդեստրուկցիաների առաջացման դեպքում: Մեծածավալ կլինիկական հետազոտությունների հիման վրա Ա.Թադևոսյանի կողմից ուսումնասիրվել է սթրեսի հետևանքով տարբեր խանգարումների առաջացումը: Ս.Սուքիասյանի կողմից մարմնականացումը սահմանվում է որպես մարմնական բաղադրիչի գերակայումն իմացականի և հուզականի նկատմամբ, իսկ հոգեկան հակազդումները դիտարկվում են մարմնականի հանդեպ հուզականի և կոգնիտիվի գերակայման դիրքից՝ դրսևորվելով հիպոխոնդրիաների, ասթենիաների և դեպրեսիաների միջոցով:

Դրանցից առավել ուսումնասիրված է դեպրեսիան: Հոգեվերլուծության մեջ, սկսած Զ.Ֆրեյդից, այն բացատրվում է կորստի պատճառով բավարարման աղբյուրից լիբիդոյի զրկմամբ և տեղի ունեցող ռեգրեսով: Այսօր կարևորվում են կոգնիտիվիստական մոտեցման ներկայացուցիչների՝ Ա.Բեկի, Լ.Ալլոյի, Լ.Աբրամսոնի, Մ.Սելիգմանի դրույթները:

Էթնոմշակութային առանձնահատկությունների տեսանկյունից սթրեսի հակազդումների սակավաթիվ տվյալներից են Ա.Կլայնմանի, Լ.Կիրմայերի, Ա.Յանգի և որոշ այլ հետազոտողների մշակութային պայմանավորվածության մասին դրույթները: Այսօր մշակույթի սահմանման մեջ առավել հատկանշական է Հ.Տրիանդիսի կողմից տրված «սուբյեկտիվ մշակույթ»-ը. նա, Մ.Գելֆանդը և ուրիշներ այն առաջարկում են կիրառել հոգեբանական հետազոտություններում: Որպես «սուբյեկտիվ մշակույթ» դիտարկում են «ինդիվիդուալիզմի-կոլեկտիվիզմի» հատկանիշները: Դ.Մացումոտոն, Դ.Օյզերմանը, Հ.Քունը և այլ հետազոտողներ նշում են արևմտյան մշակույթին ինդիվիդուալիզմի, իսկ արևելյանին՝ կոլեկտիվիզմի առավել բնորոշ լինելու մասին: Ա.Մարսելան իր գործընկերների հետ նշում են, որ

հոգեկան հակազդումներն առավել բնորոշ են ինդիվիդուալիստներին, մարմնականը՝ կոլեկտիվիստներին: Սակայն հետազոտություններն այդ առումով սակավաթիվ են, իսկ հայերի և մեր երկրում բնակվող այլ ազգերի վերաբերյալ՝ չկան:

Հետազոտության նպատակն է գիտականորեն հիմնավորել և փորձարարական ճանապարհով հաստատել սթրեսի սոմատիկ և հոգեկան հակազդումների վրա էթնոմշակութային գործոնների ունեցած ազդեցությունը:

Հետազոտության օբյեկտը անձի սթրեսային վարքի կառուցվածքա-գործառութային համակարգում սոմատիկ և հոգեկան հակազդումների վրա անդրադարձող էթնոմշակութային գործոններն են:

Հետազոտության առարկան էթնոմշակութային գործոններից կախված սթրեսի սոմատիկ և հոգեկան հակազդումների առանձահատկություններն են:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ սթրեսի սոմատիկ և հոգեկան հակազդումները որոշակի սահմաններում կախված են տվյալ ազգի էթնոմշակութային այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ ինդիվիդուալիզմի և կոլեկտիվիզմի հատկանիշները, որոնք էթնիկ խմբերում որպես այդպիսին «մաքուր» կերպով հանդես չեն գալիս, և սթրեսի հակազդումների տարբերությունները պայմանավորված են նման խմբերում առկա ինդիվիդուալիզմի և կոլեկտիվիզմի հատկանիշների հարաբերակցությամբ:

Հետազոտության նպատակից և վարկածից բխում են հետազոտության հետևյալ **խնդիրները**.

- *Տեսական բնույթի*

1. Իրականացնել սթրեսի և դրա հակազդումների ձևավորման վերաբերյալ հոգեբանական տեսությունների և մոտեցումների, ինչպես նաև սթրեսի հոգեբանական ու ֆիզիոլոգիական մեխանիզմների վերլուծություն:
2. Ուսումնասիրել և վերլուծել էթնոմշակութային գործոններով պայմանավորված սթրեսի հակազդումների վերաբերյալ գիտական սկզբնաղբյուրները:

- *Մեթոդական բնույթի*

3. Առաջարկել սթրեսի սոմատիկ և հոգեկան հակազդումների ձևավորման նոր՝ էթնոմշակութային գործոնով պայմանավորվածության ուսումնասիրման մեթոդաբանություն:
4. Տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա առաջարկել սթրեսի սոմատիկ և հոգեկան հակազդումների հաղթահարման գործընթացում էթնոմշակութային գործոնով պայմանավորված մեթոդական ցուցումներ:

- *Փորձարարական բնույթի*

5. Տարբեր էթնիկ խմբերում հոգեբանական հետազոտության մեթոդների կիրառման միջոցով հետազոտել և բացահայտել սթրեսային վիճակում գտնվող անձանց մոտ դրսևորվող սթրեսի սոմատիկ և հոգեկան հակազդումները:
6. Բացահայտել և փորձարարական ճանապարհով հիմնավորել էթնիկ խմբերում սթրեսի հակազդումների պայմանավորվածությունը մշակութային գործոնով՝ ինդիվիդուալիզմի և կոլեկտիվիզմի հատկանիշներով:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել դետերմինիզմի և համակարգային մոտեցման սկզբունքները, սթրեսի հոգեբանական մեխանիզմների մասին Լ.Կիտաև-Սմիկի, Հ.Սելյեյի և Ս.Սուքիասյանի «Սթրեսի սպեցիֆիկ հակազդումների կառուցվածքի մասին», սթրեսի և աուտոդեստրուկցաների մասին Կ.Ե.Վարդանյանի մոտեցումները, Ռ.Լազարուսի հոգեբանական տեսությունը: Սթրեսի հակազդումների էթնոմշակութային առանձնահատկությունների ուսումնասիրման հիմք են ծառայել Դ.Վ.Սյուի անձի ինքնության եռամաս մոդելը, Հ.Տրիանդիսի, Մ.Գելֆանդի, Դ.Մացումոտոյի ինդիվիդուալիզմի և կոլեկտիվիզմի հատկանիշների, Ա.Կլայնմանի մարմնական և հոգեկան հակազդումների վերաբերյալ մոտեցումները**:**

Հետազոտության գործիքակազմը: Հետազոտության համար ընտրվել են.

- *Մեթոդներ*՝ գիտական գրականության վերլուծության, զրույցի, թեստային, հարցարանային, տվյալների մաթեմատիկական վիճակագրության,
- *Մեթոդիկաներ*՝ Մ.Լյուշերի գունային թեստը, Հոլմս-Ռահեի սթրեսակայության և ադապտացիայի հարցարանը, Ս.Սուքիասյանի հոգեկան հակազդումների՝ ասթենիայի, դեպրեսիայի և հիպոխոնդրիայի բացահայտման հարցարանները, նաև SCL-90-ի մարմնականացման (սոմատիզացիայի) սանդղակը, Հ.Տրիանդիսի և Մ.Գելֆանդի հորիզոնական և ուղղահայաց ինդիվիդուալիզմի և կոլեկտիվիզմի միասնական չափման հարցարանը:

Հետազոտության գիտական նորույթը.

Հետազոտության գիտական նորույթը հանդիսանում է այն, որ հայտնաբերվել են հստակ յուրահատկություններ երեք էթնիկ խմբերում դրսևորվող սթրեսի սոմատիկ և հոգեկան հակազդումներում: Վերջինները պայմանավորված են ոչ միայն համընդհանուր կամ անձնային-անհատական, այլ նաև էթնոմշակութային առանձնահատկություններով: Տարբեր էթնիկ խմբերում սթրեսի սոմատիկ և հոգեկան հակազդումները միջնորդվում են մշակութային գործոնով՝ ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմի հորիզոնական և ուղղահայաց ենթահատկանիշներով.

ա) հայերի մոտ հորիզոնական ինդիվիդուալիզմի հատկանիշը բացասական փոխհարաբերակցության մեջ է մարմնականացման և ասթենիայի հետ,

բ) եզդիների մոտ առկա է բացասական փոխհարաբերակցություն՝ ուղղահայաց կոլեկտիվիզմի մշակութային հատկության և մարմնականացման, ասթենիայի և դեպրասիայի հակազդումների, ինչպես նաև ուղղահայաց ինդիվիդուալիզմի մշակութային հատկության և ասթենիայի ու հիպոխոնդրիայի հակազդումների միջև,

գ) ասորիների խմբում փոխկապակցված են սթրեսի ասթենիայի հակազդումը և հորիզոնական ինդիվիդուալիզմը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Կատարված հետազոտությունը կհարստացնի սթրեսի մասին տեսական մոտեցումները, կլրացնի սթրեսային հակազդման ձևաչափերը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ստացված տվյալները հնարավորություն կտան գործնականորեն մեկնաբանելու սթրեսորների նկատմամբ

հակազդումները, նպաստելու սթրես ապրած անձանց վերականգնմանը, ինչպես նաև՝ սթրեսի հետազոտության մեթոդաբանական սկզբունքների համալրմանը:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Սթրեսի հոգեկան և սոմատիկ հակազդումները պայմանավորվում են ինչպես անձի անհատական, այնպես էլ էթնիկ խմբի մշակութային առանձնահատկություններով:
2. Քանի որ Հայաստանը գտնվում է արևելքի և արևմուտքի սահմանաբաժանում, այստեղ բնակվող էթնիկ խմբերում առկա է ինչպես արևմուտքին բնորոշ ինդիվիդուալիզմը, այնպես էլ արևելքին բնորոշ կոլեկտիվիզմը:
3. Ինչպես ինդիվիդուալիզմը և կոլեկտիվիզմը, այնպես էլ այդ էթնոմշակութային հատկանիշներով պայմանավորված սթրեսի սոմատիկ և հոգեկան հակազդումները էթնիկ խմբերում ունեն տարբեր բաշխվածություն:
4. Որպես էթնոմշակութային հատկանիշներ՝ ինդիվիդուալիզմը և կոլեկտիվիզմը պայմանավորում են սթրեսի հակազդումները:

Հետազոտության փորձաքննությունը: Ատենախոսությանը վերաբերվող տեսական և փորձարարական հատվածները պարբերաբար քննարկվել են Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերի, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ 95-ամյակին նվիրված գիտաժողովի, 2014թ. ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված գիտաժողովի, ՀՀ սփյուռքի նախարարության, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի և Հայկական հոգեվերլուծական ասոցիացիայի կողմից 2012թ-ին կազմակերպած «Հասարակություն, ընտանիք, դեռահաս. արդիական խնդիրները Հայաստանում և Սփյուռքում» գիտաժողովում, 2016-2017թ. Հոգեսոցիալական կարգավորման կենտրոնի «Ռեքավերի քոլեջ»-ի դասընթացներում: Ատենախոսության թեմայի առանձին հարցերի շուրջ հոդվածներ են հրատարակվել գիտական պարբերականների ժողովածուներում:

Արդյունքների արժանահավատությունը: Այն որոշվում է մանրակրկիտ կերպով հետազոտության խնդիրների լուծման համար ընտրված փորձարարական վալիդ և հուսալի մեթոդիկաների կիրառմամբ, հետազոտվողների թվով և տվյալների մաթեմատիկական վիճակագրական վերլուծությամբ:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը շարադրված է 171 տպագիր էջերի վրա, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ներկայացված են 13 աղյուսակ, 7 դիագրամ, 4 գրաֆիկ և 3 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի ուսումնասիրված և մշակված լինելու աստիճանը, ձևակերպված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, նպատակից և վարկածից բխող տեսական, մեթոդական և փորձարարական բնույթի

խնդիրները, տեսական-մեթոդաբանական հիմքերը, հետազոտության գործիքակազմը: Պարզաբանված է հետազոտության ընթացքը, նկարագրված են հետազոտության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը և պաշտպանության ներկայացվող դրույթները, փորձաքննությունը, արդյունքների արժանահավատությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Սթրեսը որպես հոգեբանական հիմնախնդիր»** խորագրով գլխում իրականացվում է սթրեսի, դրա կառուցվածքի, պատճառների բազմակողմանի ուսումնասիրություն: Այն բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին՝ «Սթրեսի մասին պատկերացումները» ենթագլխում ներկայացված են սթրեսի տեսակները, հոգեֆիզիոլոգիական տեսությունը, սթրեսի՝ որպես դեռևս Հ.Սելյեյի կողմից սահմանված ընդհանուր ադապտացիոն սինդրոմի փուլերը և օրգանիզմի հոմեոստազի խախտման և վերականգնման անհրաժեշտությունը, այլ հետազոտողների՝ Գ.Կասսիլի, Լ.Կիտան-Սմիկի, Ս.Սուքիասյանի կողմից սթրեսից խորքային պաշարների սպառման պատճառով առաջացող հիվանդությունների առաջացման մասին մոտեցումները: Տրվում է ֆիզիոլոգիական, հուզական, հոգեբանական սթրեսների սահմանումները, նկարագրվում է սթրեսի, ըստ Հ.Սելյեյի, ոչ-սպեցիֆիկ, նաև՝ Ս.Սուքիասյանի կողմից կարևորվող յուրահատուկ՝ մարմնական և բուն հոգեկան հակազդումների կառուցվածքը:

Երկրորդ՝ «Սթրեսը որպես սթրեսորին տրվող ոչ յուրահատուկ հակազդում» ենթագլխում քննարկվում են սթրեսի մասին հոգեբանական տեսությունները. այն մեկնաբանվում է Զ.Ֆրեյդի հոգեվերլուծական տեսության շրջանակներում, ուսումնասիրվում է Ռ.Լազարուսի կոգնիտիվիստական բնորոշման դիրքերից, ինտերակցիոնիստական սահմանման մեջ Ջ.Մըք Գրաթի, Թ.Բեերի կողմից՝ անձի կողմից միջավայրի պահանջի և օրգանիզմի հնարավորությունների միջև անհավասարակշռության գիտակցման արդյունք: Այս հոգեբանական սահմանումների հետ հանդերձ ներկայացվում է Վ.Բոդրովի, Յու.Շչերբատիխի, մեր հայրենակիցներ Ս.Սուքիասյանի, Ա.Թադևոսյանի, Ս.Ճշմարիտյանի, Ն.Մանուկյանի առաջարկած ան-ձի կոգնիտիվ, անհատական առանձնահատկությունները և փորձը, Թ.Հոլմսի ու Ռ.Ռահեի, Գ.Բրաունի ու Թ.Հարիսի առաջարկած սթրեսորների դերը դիտարկելու անհրաժեշտությունը: Տրվում է աուտոդեստրուկցիաներում սթրեսի դերի մասին Կ.Վարդանյանի մոտեցումը: Այս ենթագլխում սթրեսն ուսումնասիրվում է նաև համակարգային մոտեցման տեսության դիրքերից:

Երրորդ՝ «Էթնոմշակութային գործոնի դերը սթրեսի համատեքստում» ենթագլխում ներկայացվում են «էթնոս» և «մշակույթ» եզրույթների մի շարք սահմանումներ, ինչպես նաև հիմնավորվում է մշակութային համատեքստում սթրեսի ուսումնասիրման կարևորությունը: Այս առումով դիտարկվում է Դ.Վ.Սյուի անձի եռամաս մոդելը, մասնավորապես խմբային մակարդակը, որի մեջ է ընդգրկվում նաև էթնոսը: Այստեղ անդրադարձ է կատարվում նաև Հ.Տրիանդիսի և Մ.Գելֆանդի առաջարկած կոլեկտիվիզմ-ինդիվիդուաիզմ մշակութային հատկանիշների և դրանց հորիզոնական և ուղղահայաց ենթահատկանիշների նկարագրմանը և մշակութային հետազոտություններում դրանց կիրառման կարևորությանը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Սթրեսի էթնոմշակութային առանձնահատկությունները»** գլխում քննարկվում են սթրեսի հակազդումները:

Տվյալ գլխի առաջին ենթագլխում, որի խորագիրն է «Մարմնականացումը որպես սթրեսի հակազդման տեսակ», քննարկվում են մարմնի և հոգու փոխկապվածության մասին առկա հայեցակետերը՝ սկսած հին աշխարհից մինչ մեր օրերը հոգեմարմնական հարաբերությունները բացատրող Զ.Ֆրեյդի, Վ.Ռայխի Ա.Լոուենի, Ս.Կելեմանի, Ս.Ապոշյանի, Ա.Ալեքսանդերի, Մ.Բալինտի, Ֆ.Դանբարի, Ջ.ՄըքԴագլի, Ս.Մինուխինի, Չ.Ֆիշմանի, Պ.Մարտիի, Մ.դը՛Մյուզանի հոգեվերլուծական մեկնաբանությունները, Ա.Մեյերի կենսահոգեսոցիալական մոդելը, այդպիսով սթրեսի սոմատիկ հակազդումը մեկնաբանվում է որպես իմացականի և հուզականի հանդեպ մարմնականի գերակայում, անձի համար կարևորագույն խմբում, օրինակ ընտանիքում խնդիրները լուծելու ընդունված միջոց:

«Սթրեսի յուրահատուկ հոգեկան հակազդումները» խորագրով երկրորդ ենթագլխում նկարագրվում են սթրեսի հոգեկան հակազդումները, ինչպիսիք են ասթենիան, դեպրեսիան և հիպոխոնդրիան, մանրամասնվում է դրանց պատճառականությունը:

Երրորդ «Սթրեսի մարմնական և հոգեկան հակազումների էթնոմշակութային հետազոտությունների վերլուծություն» ենթագլուխը ամփոփում է այս հարցի շուրջ առկա հետազոտությունները: Մասնավորապես, Ա.Վուլֆոլկը և Լ.Ալլենը, Մ.Բլյումենֆիլդը և Ջ.Սթրեյնը առաջարկում են դիսթրեսի պատճառները փնտրել հասարակության մշակույթի մեջ: Միջմշակութային հետազոտությունների արդյունքում Դ.Մարսելան, Լ.Կիրմայերը և Գ.Ուայթը, Է.Շեֆելինը Ջ.Քիհլսթրոմը, Լ.Քանթեր-Կիլսթրոմը, Ա.Յանգը, Ջ.Ռոբինսը, Ա.Ռայդերը, Ջ.Յանգը, Ս.Հեննիսը, Բ.Գուդը, Մ.ԴելՎեչիո Գուդը, Ռ.Մորադին և մի շարք այլ հետազոտողներ նշում են ինդիվիդուալիստական արևմտյան մշակույթում ավելի գերակայող փսիխոլոգիզացիայի՝ դեպրեսիայի, մինչդեռ դրա սոմատիզացված ձևը կոլեկտիվիստական արևելյան մշակույթներին առավել բնորոշ լինելու մասին: Այս ենթագլխում նաև վերլուծվում է Ս.Սուքիասյանի, Լ.Մելիք-Շախնազարյանի, Դ.Լենգի կողմից հայերին բնորոշ էթնոմշակութային առանձնահատկությունների մասին բնութագրիչներ, որոնք կարող են անդրադառնալ սթրեսի հակազդումների ձևավորման վրա:

Հիմք ընդունելով ատենախոսության առաջին և երկրորդ գլուխներում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքները՝ կազմակերպվել և իրականացվել է ատենախոսության հիմնախնդրի հետազոտության փորձարարական մասը, որը ներկայացված է երրորդ՝ «**Սթրեսի հակազդումների էթնոմշակութային առանձնահակությունների փորձարարական հետազոտություններ**» գլխում:

Սույն գլխի առաջին՝ «Հետազոտության ռազմավարությունը և մեթոդաբանությունը» ենթագլխում նկարագրված է հետազոտեթան կազմակերպման ընթացքը՝ ընդգրկելով 2012-2016թթ.: Հետազոտության առաջին տեսական-որոնողական փուլում իրականացվել է թեմայի շուրջ մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, ինչի հիման վրա սահմանվել

են վարկածը, օբյեկտը, տեսական-մեթոդաբանական հիմքերը, մեթոդները և կազմվել է աշխատանքային պլան:

Սահմանվել է փորձարարական հետազոտության նպատակը, բացահայտվել էթնոմշակութային ցուցանիշներ հորիզոնական և ուղղահայաց կոլեկտիվիզմի և ինդիվիդուալիզմի և սթրեսի հակազդումների միջև առկա հարաբերակցությունը և տարբերությունները էթնիկ խմբերում: Ելնելով գրականության վերլուծությունից՝ սթրեսի հակազդումները հետազոտվել են «դիմադրության» փուլում:

Հետազոտությունը կառուցելու համար ընտրվել են հոգեբանական գիտության մեջ ընդունված մեթոդներ.

- Հետազոտության ընտրակազմը կազմելու համար՝ մաթեմատիկական մոդելավորում,
- Փորձարարական տվյալների ձեռքբերման համար՝ հոգեախտորոշիչ մեթոդներ՝ զրույց, մոդելավորում, թեստավորում, հարցարանային մեթոդ, համեմատական մեթոդ,
- Տվյալների քանակական վերլուծության մաթեմատիկական վիճակագրության մեթոդ,
- Հոգեբանական վերլուծություն:

Հետազոտության բուն ***փորձարարական*** փուլն անց է կացվել 2013-2014թթ. երկու ուղղություններով՝ 1. Տարբեր էթնիկ խմբերից սթրեսային վիճակում գտնվող անձանց բացահայտման և 2. Յուրաքանչյուր էթնիկ խմբում սթրեսի հակազդումների, ինչպես նաև մշակութային սուբյեկտիվ հատկանիշների արտահայտվածության բացահայտման:

Փորձարարական հետազոտության համար կազմվել է առաջնային ընտրակազմ՝ Հայաստանում բնակվող երեք առավել մեծ էթնիկ խմբերի ներկայացուցիչներից՝ հայեր, եզդիներ և ասորիներ՝ 20-59 տարեկան անձանցից՝ յուրաքանչյուր էթնիկ խմբից 65-ական մարդ (հայերը՝ ք.Երևանից, ք.Արմավիրից, ք.Սիսիանից, եզդիները՝ Արագածոտնի մարզի Շամիրամ, Արմավիրի մարզի Ֆերիկ և Օշական, Կոտայքի մարզի Մայակովսկի, Արարատի մարզի Գետափ գյուղերից, ասորիները՝ Արմավիրի մարզի Նոր Արտագերս, Արարատի մարզի Դիմիտրով և Վերին Դվին, Կոտայքի մարզի Արզնի գյուղերից և ք.Երևանից): Էթնոսոցիոլոգիական ֆիլտրի միջոցով առաջնային ընտրակազմից կազմվել է երկրորդային՝ հետազոտության հիմնական ընտրակազմը, որի մեջ ընդգրկվել են այն անձինք, ովքեր փորձարարական տվյալ-ների ձեռքբերման երեք մեթոդների՝ զրույցի, սթրեսակայունության և ադապ-տացիայի բացահայտման Հոլմս-Ռահեյի հարցարանի և Լյուշերի գունային թեստի տվյալներով գտնվում են սթրեսային վիճակում (հայեր՝ 35, եզդիներ՝ 36, ասորիներ՝ 34): Հոգեկան հակազդումների բացահայտման համար կիրառվել է Ս.Սուքիասյանի կողմից կազմված *ասթենիայի, դեպրեսիայի և հիպոխոնդրիայի հարցարանները,* մարմնականացման բացայատման համար՝ *SCL-90 հարցարանի մարմնականացման (սոմատիզացիայի) սանդղակը,* իսկ մշակութային սուբյեկտիվ ցուցանիշների ուսումնասիրման համար՝ Հ.Տրիանդիսի և Մ.Գելֆանդի «*Հորիզոնական և ուղղահայաց ինդիվիդուալիզմի և կոլեկտիվիզմի չափման*» հարցարանը: Ընտրակազմի յուրաքանչյուր էթնիկ խմբի մոտ ասթենիայի, դեպրեսիայի,

հիպոխոնդրիայի և սոմատիզացիայի (մարմնականացման) արտահայտվածության միջին արժեքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Սթրեսի հակազդումների արտահայտվածության միջին արժեքները (Mx)

Աղյուսակ 1

ազգություն	Ասթենիա	Դեպրեսիա	Հիպոխոնդրիա	Սոմատիզացիա
հայեր	6.69	5.77	3.89	0.85
եզդիներ	7	6.19	6.41	1.16
ասորիներ	6.29	4.35	4.35	0.64

Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս, որ հոգեկան հակազդումներից երեք խմբերում ամենաբարձրն ասթենիայի ցուցանիշն է, եզդիների ընտրակազմում մյուս հատկանիշների ցուցանիշները ցածր են ասթենիայի ցուցանիշից, հայերի մոտ հիպոխոնդրիայի միջին ցուցանիշն է ամենացածրը, ասորիների մոտ դեպրեսիայի և հիպոխոնդրիայի միջին ցուցանիշները ցածր են ասթենիայից հավասարապես՝ կազմելով՝ 4.35 միավոր: SCL-90 հարցարանի սոմատիզացիայի սանդղակի տվյալները ցույց են տալիս, որ դրա տենդենցի արտահայտվածության միջին արժեքները, որոնք արտացոլված են նույն աղյուսակի «Սոմատիզացիա» սյունակում, ամենաբարձրն են կրկին եզդիների խմբում՝ 1.16 միավոր, մեծ տարբերությամբ հայերի մոտ՝ 0.85 միավոր, իսկ ասորիների մոտ՝ 0.64 միավոր: Ուստի, ինչպես ասթենիայի դեպքում, սոմատիզացիայի արտահայտվածության առումով ևս եզդիների մոտ գրանցվել է ամենաբարձր ցուցանիշը:

Սթրեսի հակազդումների արտահայտվածությունը խմբերում, ստացված ցուցանիշների տոկոսային բաշխումներն արտահայտել ենք գրաֆիկի տեսքով (գրաֆիկ 1-ում ասթենիայի, գրաֆիկ 2-ում՝ դեպրեսիայի, գրաֆիկ 3-ում հիպոխոնդրիայի, գրաֆիկ 4-ում՝ սոմատիզացիայի համար), որտեղ երևում է, թե որ խմբում առավելապես ինչպիսի ցուցանիշներ են եղել:



Գրաֆիկ 1. Ասթենիայի տարբեր մակարդակի արտահայտվածության (խանգարման) բաշխվածությունը երեք ազգերի ընտրակազմում

Գրաֆիկից երևում է, որ ասթենիայի ցուցանիշների բարձր միավորներ (7 և ավելի) գրանցվել են բոլոր խմբերում: Այդ ցուցանիշը խոսում է ձևավորված

հակազդման մասին, որը կիրառելի է նաև հոգեկան բոլոր հակազդումների սանդղակների համար: Հարկ է նշել, որ հայերի խմբում այն կազմել է 51%, եզդիների խմբում՝ 53%, իսկ ասորիների մոտ՝ 56%:



Գրաֆիկ 2. Դեպրեսիայի տարբեր մակարդակի արտահայտվածության (խանգարման) բաշխվածությունը երեք ազգերի ընտրակազմում

Նույնը կարելի է ասել նաև դեպրեսիայի դեպքում: Սակայն ակնհայտ է, որ ասորիների խմբում բարձր միավորներով արտահայտված դեպրեսիայի ցուցանիշներ ունեցողների տոկոսն ավելի ցածր է, այն արձանագրվել է 23%-ի մոտ, հայերի ընտրակազմում՝ 43%-ի և եզդիների՝ 42%-ի մոտ:



Գրաֆիկ 3. Հիպոխոնդրիայի տարբեր մակարդակի արտահայտվածության (խանգարման) բաշխվածությունը երեք ազգերի ընտրակազմում

Ինչպես երևում է գրաֆիկ 3-ում, հիպոխոնդրիան հայերի և ասորիների մոտ քիչ է արտահայտված, ինչը չի կարելի ասել եզդիների մասին: Այդպես, ասթենիան՝ որպես ձևավորված հակազդում արձանագրվել է հայերի 17%-ի, ասորիների 21%-ի, իսկ եզդիների 53%-ի մոտ:

Սոմատիզացիայի ցածր և միջին ցուցանիշներ արձանագրվել են բոլոր խմբերում, որը խոսում է տենդենցի մասին, սակայն եզդիների մոտ՝ համեմատաբար

բարձր ցուցանիշներ: Այստեղ ախտաբանության մասին է խոսում 2-ից բարձր միավորը. այդպես, այն արձանագրվել է հայերի 3%-ի, եզդիների՝ 22%-ի մոտ, իսկ ասորիների ընտրակազմում կազմել է 0%



Գրաֆիկ 4. Սոմատիզացիայի տարբեր մակարդակի արտահայտվածության (խանգարման) բաշխվածությունը երեք ազգերի ընտրակազմում

Հայերի, եզդիների և ասորիների ընտրակազմերում մշակութային հատկանիշների արտահայտվածության ցուցանիշների միջին արժեքները աղյուսակ 2-ում են արտացոլված:

Սուբյեկտիվ մշակութային հատկանիշների արտահայտվածության միջին ցուցանիշները

Աղյուսակ 2

Ազգություն	Mx VC	Mx HC	Mx VI	Mx HI
Հայեր	22.8	19.83	20.26	23.65
Եզդիներ	25.55	21.5	23.19	23.58
Ասորիներ	23.62	22.44	20.26	24.58

որտեղ VC՝ ուղղահայաց կոլեկտիվիզմը, HC՝ հորիզոնական կոլեկտիվիզմը, VI՝ ուղղահայաց ինդիվիդուալիզմը և HI՝ հորիզոնական ինդիվիդուալիզմը:

Ըստ Հ.Տրիանդիսի և Մ.Գելֆանդի, ուղղահայաց կոլեկտիվիստները կարևորում են ներխմբային հարաբերությունները, ընդունում են հեղինակությունների աստիճանակարգում, խմբում հավասարության ցածր մակարդակ, իրենց նպատակները կարող են զոհաբերել հանուն խմբի նպատակների, ուղղահայաց ինդիվիդուալիստներն իրենց և ուրիշների «Ես»-ի միջև հստակ տարբերություն են դնում, հավասարության ցածր մակարդակի հետ ընդունում են ազատության բարձր մակարդակ, հորիզոնական ինդիվիդուալիսները իրենց և ուրիշների «Ես»-ի միջև տարբերություն չեն դնում, ունեն հավասարության բարձր մակարդակ, կարևորում են ուրիշների հետ ընդհանուր նպատակները, իսկ հորիզոնական ինդիվիդուալիստները բնորոշվում են հավասարության բարձր մակարդակով և կարևորում են սեփական նպատակները, ձգտում են տարբերվել: Ինդիվիդուալիստները հուզական առումով խմբակիցներից ավելի հեռու են:

Աղյուսակ 2-ի տվյալները առավել պատկերավոր տրվում է դիագրամներով:



Դիագրամ 1. Մշակութային սուբյեկտիվ հատկանիշների արտահայտվածության միջին ցուցանիշները հայերի խմբում



Դիագրամ 2. Մշակութային սուբյեկտիվ հատկանիշների արտահայտվածության միջին ցուցանիշները եզդիների խմբում



Դիագրամ 3. Մշակութային սուբյեկտիվ հատկանիշների արտահայտվածության միջին ցուցանիշները ասորիների խմբում

Հայերի ընտրակազմում առավել արտահայտված է հորիզոնական ինդիվիդուալիզմը (23.65), հետո՝ ուղղահայաց կոլեկտիվիզմը (22.8): Փաստորեն, առաջին տեղում անձնական արժեքներն ու նպատակներն են, հույսն ավելի շատ դնում են իրենց վրա և իրենց համարում են ուրիշներից անկախ, ուղղահայաց կոլեկտիվիզմի բարձր ցուցանիշը պայմանավորված է ընտանիքի կամ այն խմբի արժևորմամբ, որին պատկանում են, և ակնկալում են խմբակիցների սատարումը: Եզդիների խմբում առավել բարձր է ուղղահայաց կոլեկտիվիզմը (25.5), երկրորդը՝ հորիզոնական ինդիվիդուալիզմն է (23.58). եզդիները ունեն հատուկ հոգևոր-սոցիալական աստիճանակարգ, որը խախտելն անհնար է, և դա, ինչպես նաև էթնոսին բնորոշ սոցիալական օրենքների խախտումը, հղի են հետևանքներով, մեծերի հեղինակությունը շատ բարձր է և շատ են արժևորում ընտանիքի ամբողջականությունը: Չնայած դրան, եզդիները կարևորում էին նաև սեփական նպատակները, ինչի մասին խոսում է հորիզոնական ինդիվիդուալիզմի երկրորդ տեղում բարձր ցուցանիշը: Ասորիների ընտրակազմում մշակութային հատկանիշների ցուցանիշ-ներից առավել բարձրը, ինչպես և հայերի, հորիզոնական ինդիվիդուալիզմինն է (24.58), այնուհետև՝ ուղղահայաց կոլեկտիվիզմինը (23.62):

Ընդգծենք, որ այդ մշակութային սուբյեկտիվ հատկանիշները, ինչպես նշում է Հ.Տրիանդիսը, կան բոլոր խմբերի մոտ, բայց ուրույն պատկեր է ստեղծում մեկի գերակայումը մյուսի հանդեպ: Եվ հաստատել, որ մեր կողմից ուսումնասիրվող էթնիկ խմբերը զուտ կոլեկտիվիստական են կամ ինդիվիդուալիստական, հիմնավորված չէ:

Հետազոտության երրորդ՝ ***ընդհանրացնող*** փուլը միտված էր սթրեսի հակազդումների մշակութային սուբյեկտիվ հատկանիշներով հնարավոր պայմանավորվածությունը բացահայտելուն: Նախ հիմնական հետազոտության ողջ ընտրակազմի՝ 105 հետազոտվողների համար ստուգվել են սթրեսի հակազդումների և սուբյեկտիվ մշակութային գործոնների միջև հարաբերակցական կապերը: Այդպիսիք չեն հայտնաբերվել անգամ Սպիրմենի ռանգային կորելյացիոն գործակցով հաշվելիս, ինչից եզրակացնում ենք, որ երկրի միևնույն սոցիալ-տնտեսական և մշակութային դաշտը չի հանդիսանում նույնատիպ հակազդումների ձևավորման վրա անդրադարձող ընդհանուր գործոն, և մեր երկրում բնակվող էթնիկ խմբերի ներկայացուցիչների մոտ սթրեսի հակազդումները պայմանավորված են այլ՝ էթնոսին բնորոշ մշակութային հատկա-

նիշներով: Ուստի երեք խմբերի համար առանձին ստուգվել են սթրեսի հոգեկան և մարմնականացման հակազդումների և մշակութային սուբյեկտիվ յուրաքանչյուր հատկանիշի միջև կորելյացիոն կապերը: Քանի որ դրանք ենթարկվում են նորմալ բաշխման, այդ գործոնների միջև կապերը հաշվարկվել են Պիրսոնի գծային կորելյացիոն գործակցի կիրառմամբ: Տվյալները բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Հայերի, եզդիների և ասորիների ընտրակազմում սթրեսի հակազդումների և սուբյեկտիվ մշակութային հատկանիշների արտահայտվածության ցուցանիշների միջև կորելյացիայի գործակիցները

		Հայեր, n=35	Եզդիներ, n=36	Ասորիներ, n=34
Սոմատիզացիա	ՈւԿ	-	-0.331	-
	ՀԻ	-0.327	-	-
Ասթենիա	ՈւԿ	-	-0.284	-
	ՈւԻ	-	0.291	-
	ՀԻ	-0.331	-	0.312
Դեպրեսիա	ՈւԿ	-	-0.311	-
Հիպոխոնդրիա	ՈւԻ	-	0.332	-

Հայերի մոտ հորիզոնական ինդիվիդուալիզմի և ասթենիայի միջև բացասական հարաբերակցությունը, հավանաբար, նշանակում է, որ ինքնուրույնությամբ, ինքնադրսևորմամբ, սեփական արժեքների ճնշմամբ պայմանավորված սթրեսային իրավիճակներում լինում են սոմատիզացիայի և ասթենիայի հակազդումներ: Եզդիների մոտ ուղղահայաց կոլեկտիվիզմի հատկությունները կարող են մեղմացնել սոմատիզացիայի, ասթենիայի և դեպրեսիայի հակազդումները, իսկ ուղղահայաց ինդիվիդուալիզմին բնորոշ հատկությունները, օրինակ, ինքնուրույնությունը, մրցակցությունը, կարող են ասթենիայի և հիպոխոնդրիայի հանգեցնել: Ասորիների մոտ հորիզոնական ինդիվիդուալիզմի հատկությունները կարող են ասթենիայի պատճառ լինել:

Այսպիսով, սթրեսի հակազդումները կարող են պայմանավորված լինել սուբյեկտիվ մշակույթի հատկանիշներով, որոնք յուրաքանչյուր էթնիկ խմբում տարբեր արտահայտվածություն ունեն, ինչով կարող են պայմանավորել էթնիկ խմբերի ներկայացուցիչների սթրեսի հակազդումները, նաև լինել սթրեսակայունության և սթրեսի հաղթահարման յուրատիպ մեխանիզմներ: Ելնելով վերը նշվածից՝ հոգեբանական սթրեսի կառուցվածքում ազդակից մինչև հակազդման ձևավորման շղթայում կարելի է կատարել հետևյալ համալրումը. «ազդակ → էթնոմշակութային գործոն → անձի կողմից ազդակի գնահատում, անձնային-անհատական առանձնահատկություններ → հակազդում»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հիմնավորվել և հաստատվել է, որ Հայաստանում բնակվող ազգային էթնիկ խմբերում առկա են ինչպես արևմուտքին, այնպես էլ արևելքին բնորոշ մշակութային հատկանիշներ՝ ինդիվիդուալիզմը և կոլեկտիվիզմը: Մասնավորապես հաստատվել է, որ հետազոտության մեջ ընդգրկված երեք էթնիկ խմբերում՝ հայերի, եզդիների և ասորիների մոտ առկա են և՛ կոլեկտիվիզմի, և՛ ինդիվիդուալիզմի հատկանիշները՝ իրենց ենթահատկանիշներով, որոնք սակայն ունեն տարբեր դրսևորման աստիճաններ:
2. Հիմնավորվել և առաջարկվել է սթրեսի հակազդման նոր մոդել, որում իրենց ուրույն տեղն ունեն էթնոմշակութային այնպիսի կազմավորումներ, ինչպիսիք են՝ հորիզոնական և ուղղահայաց ինդիվիդուալիզմի և կոլեկտիվիզմի հատկանիշները, ինչպես նաև դրանց համահարաբերակցությունները:
3. Փորձարարական ճանապարհով ապացուցվել է, որ ազգային փոքրամասնությունները, թեև տևական ժամանակ ապրել են հայկական միջավայրում, սակայն պահպանել են իրենց նեղ ազգային էթնիկ առանձնահատկությունները, ինչն էլ ընկած է սթրեսի հակազդման նոր՝ սույն հետազոտությամբ առաջարկվող մոդելի հիմքում:
4. Հաստատվել է, որ սթրեսի հակազդումները՝ էթնիկ ավանդույթների ներգործության միջոցով, ունեն կառուցողական նշանակություն սթրեսի մեղմացման գործընթացում, և դրանք Հայաստանում բնակվող տարբեր ազգերի մոտ տարբեր դրսևորման աստիճաններ ունեն: Այս հիմնավորումն է ընկած այն մտահանգման հիմքում, որ սթրեսի հակազդումների ախտաբանական դրսևորումները կարող են նվազեցվել ազգային էթնիկ գործոնի ազդեցությամբ:
5. Ապացուցվել է, որ կարելի է ղեկավարել սթրեսը՝ ուղղորդելով սթրեսորի հաղթահարումը նվազագույն տրավմաների դրսևորումներով, այսինքն՝ սթրեսի արդյունավետ կանխարգելման համար կարելի է կիրառել սթրեսորին տրվող հակազդման այնպիսի մոդել, որում ընդգրկված է էթնոմշակութային գործոնը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Կարապետյան Լ.Գ. «Էթնոմշակութային գործոնի դերը սթրեսի ձևավորման գործընթացում», Տեսական և կլինիկական բժշկության հարցեր, Գիտագործնական հանդես. - Եր. Լիմուշ, 2017 N1 (111), էջ 37-41
2. Կարապետյան Լ.Գ. «Սթրեսի հակազդումների էթնոմշակութային գործոնով պայմանավորվածության փորձարարական հետազոտում», Տեսական և կլինիկական բժշկության հարցեր, Գիտագործնական հանդես. - Եր. Լիմուշ, 2017 N1 (111), էջ 47-50
3. Կարապետյան Լ.Գ. «Հույզերը սթրեսի սոմատիկ հակազդումների ձևավորման գործընթացում», Հատուկ մանկավարժության հիմունքներ, Գիտամեթոդական հանդես. –Եր.2007, N5 էջ 82-87
4. Կարապետյան Լ.Գ. «Դեպրեսիայի՝ որպես սթրեսի հակազդման մշակութային պատճառականության ուսումնասիրության կարևորությունը», Տեսական և կլինիկական բժշկության հարցեր, Գիտագործնական հանդես. - Եր. Լիմուշ, 2016 N6 (110), էջ 54-56

5. Կարապետյան Լ.Գ. «Մշակութային գործոնի դերը սթրեսային սպեցիֆիկ հակազդումների կառուցվածքում», Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայության և հոգեբանության հիմնախնդիրներ, ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի հավաքածու. – Եր. - ԵՊՀ Հրատարակչություն, 2014, էջ 192-194
6. Կարապետյան Լ.Գ. «Հոգեսոմատիկ հիվանդություններ. պատմական ակնարկ», Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրներ. գիտական հոդվածների ժողովածու, N2, Եր. -Լիմուշ հրատարակչություն-2012, էջ 91-100
7. Կարապետյան Լ.Գ. «Մշակութային գործոնի դերը հոգեսոմատիկ հիվանդությունների ձևավորման գործում», Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրներ. գիտական հոդվածների ժողովածու, N2, Եր. - Լիմուշ հրատարակչություն-2012, էջ 101-109
8. Կարապետյան Լ.Գ. «Մշակույթը՝ որպես հոգեբանական երևույթների ձևավորման դետերմինանտ», Հասարակություն, ընտանիք, դեռահաս՝ արդիական խնդիրները Հայաստանում և Սփյուռքում. միջազգային գիտա-գործնական համաժողովի հոդվածների ժողովածու /ՀՀ Սփյուռքի նախարարություն, Հայ-ռուսական /սլավոնական/ համալսարան, Հայկական հոգեվերլուծական ընկերություն, Եր.- 2012, էջ 87-90
9. Կարապետյան Լ.Գ. «Դեպրեսիայի հոգեկանացման և մարմնականացման ելքերը միջմշակութային դաշտում», Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները. Միջազգային գիտաժողով. ԵՊՀ, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, Եր. -Էդիտ Պրինտ- 2001, էջ 136-138
10. Karapetyan L.G., Vardanyan K.Y. “Ethnic-cultural study of relation of individualism-collectivism to distress responses”, Научный журнал “Интернаука” 1 (1), часть 3.- М.- 2016, стр. 28-34

КАРАПЕТЯН ЛИЛИТ ГУРГЕНОВНА
ЭТНОКУЛЬТУРАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ СТРЕССОВЫХ РЕАКЦИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 "Общая психология, теория и история психологии, психология личности".

Защита диссертации состоится 11-ого апреля 2019 года в 12.00 на заседании специализированного совета психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х.Абовяна, по адресу: г.Ереван, 0010, пр.Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследовния. Стрессы являются постоянно актуальной проблемой исследования для ряда научных дисциплин. Сегодня наше общество проживает переходный период, что представляет собой состояние аномии, способствующее развитию стрессов, проявляясь депрессиями, разными психосоматическими нарушениями, хронической усталостью и другими реакциями, которые во многих странах приобретают эпидемический характер. Механизмы, условия, факторы развития стресса на сегодняшний день недостаточно исследованы, особенно в этнокультуральном контексте, что способствовало изучению данной проблематики. Этим обусловлена актуальность исследования.

Объектом исследования являются этнокультуральные факторы, воздействующие на соматические и психические реакции в структурно-функциональной системе стрессового поведения личности.

Цель исследования: научным образом обосновать и экспериментальным путем подтвердить влияние этнокультуральных факторов на соматические и психические стрессовые реакции.

Гипотеза исследования. Предполагаем, что соматические и психические реакции стресса зависят от таких этнокультуральных факторов, как индивидуализм и коллективизм, которые, как таковые, у этнических групп не проявляются "чистым" образом, и их различия обусловлены соотношением данных культуральных факторов в этих группах.

Задачи исследования. В соответствии с целью и гипотезой исследования определены следующие задачи:

1. Провести анализ психологических теорий и концепций развития стресса и его реакций, а также его психологических и физиологических механизмов.
2. Изучить и анализиривать научные источники о стрессовых реакциях, где рассматривается их обусловленность этнокультуральными факторами.
3. Предложить новую, обусловленную этнокультуральным фактором методологию изучения соматических и психических реакций стресса.

4. На основе результатов теоретических и экспериментальных исследований в процессе преодоления соматических и психических реакций стресса предложить методические рекомендации, обусловленные этнокультуральным фактором.
5. При помощи психологических методов исследования исследовать и выявить соматические и психические реакции, проявляющиеся у личностей разных этнических групп, находящихся в стрессовой ситуации.
6. Выявить и экспериментальным путем обосновать обусловленность стрессовых реакций культуральным фактором индивидуализма и коллективизма в этнических группах.

Научная новизна исследования. Предложен новый подход в изучении стресса и его реакций, предполагающий рассмотрение их обусловленности этнокультуральными факторами. В исследовании обосновывается обусловленность соматических и психических стрессовых реакции культуральными факторами горизонтального и вертикального индивидуализма и коллективизма у армян, езидов и ассирийцев, проживающих в Армении.

Теоретическая значимость исследования. В современной психологии этнокультуральные исследования позволяют более целостно рассмотреть проблему стресса. Наши исследования обогощают ограниченные данные о психических и соматических стрессовых реакциях у армян и других этнических групп, проживающих в Армении. В работе делается попытка предложить новый, этнокультуральный подход к изучению развития стрессовых реакций.

Практическая значимость исследования. Результаты нашего исследования могут быть использованы в работе с людьми, перенесшими стресс. Данные исследования применимы в прогнозировании и профилактике возможного усиления стрессовых реакций у представителей этнических групп, проживающих в Армении, с учетом этнокультуральных особенностей паттернов индивидуализма и коллективизма.

Достоверность исследования обеспечивается использованием валидных и надежных методик, выбранных для решения выдвинутых задач исследования, объемом исследуемого контингента, а также математико-статистическим анализом данных.

Структура диссертации. Работа состоит из введения, трех глав, заключения, списка литературы (176 источника) и 2 приложений. Представлены 13 таблиц, 7 диаграмм, 4 графика и 3 рисунка. Объем работы составляет 171 страниц.

KARAPETYAN LILIT G.

ETHNIC-CULTURAL PECULIARITIES OF STRESS REACTIONS

Dissertation for pursuing a Degree of Candidate of Psychological Sciences in specialty of 19.00.01 "General Psychology, Theory and History of Psychology, Psychology of Personality".

The official defence of the thesis will take place at 12:00 PM, April 11, 2019, at the Higher Attestational Commission's 064 Degree-Awarding Scientific Council's meeting at Kh.Abovyan Armenian State Pedagogical University (Address: Yerevan, 0010, Tigran Mets ave., 17).

SUMMARY

The relevance of the research. Stresses are in permanent research interest of many scientific disciplines. Individual life, social-economic, political events become causes for stress manifesting in depressions, various psychosomatic disorders, chronic fatigue and other reactions which have turned into epidemic phenomenon in many countries. The mechanisms, conditions, factors of stress development are not studied enough, especially in ethnic-cultural context, which contributed to the study of this problem.

The object of the research are ethnic-cultural factors influencing on the somatic and mental reactions in the structural-functional system of a person's stress behavior.

The purpose of the research is to scientifically substantiate and experimentally confirm the influence of ethnic-cultural factors on somatic and mental stress reactions.

The hypothesis of the research. It is supposed that somatic and mental stress reactions depend on such ethnic-cultural factors as individualism and collectivism which are not purely typical for ethnic groups and the differences between them are determined by relation of these cultural factors in ethnic groups.

The objectives of the research. In accordance with the purpose and hypothesis of the research the following objectives are defined:

1. To analyze psychological theories about stress, its reactions and its psychological and physiological mechanisms.
2. To study and analyze scientific sources about stress reactions where their determination by ethnic-cultural factors is considered.
3. To offer a new methodology of study determined by ethnic-cultural factor for somatic and mental stress reactions.
4. Based on the results of theoretical and experimental study to offer methodical recommendations on the process of treatment of somatic and mental stress reactions determined by ethnic-cultural factors.

5. With a help of psychological research methods to study and explore the somatic and mental reactions that are typical for stressed out persons belonging to different ethnic groups.
6. To explore and experimentally substantiate the determination of stress reactions in ethnic groups by cultural factors of individualism and collectivism.

The scientific novelty of the research. A new approach to study stress and its reactions is offered which considers their ethnic-cultural determination. In the study, the determination of somatic and mental stress reactions by ethnic factors of horizontal and vertical individualism and collectivism among Armenians, Yezidis and Assyrians, living in Armenia, is substantiated.

The theoretical significance of the research. In the contemporary psychology the ethnic-cultural researches allow more holistic study of the problem of stress. Our research enriches the limited data on mental and somatic stress reactions in Armenians and other ethnic groups living in Armenia. The research attempts to offer a new, ethnic-cultural approach to study development of stress reactions.

The practical significance of the research. The results of our research can be used in work with people in stress. The data obtained in the research can be applied in prediction and prevention of possible stress intensification.

The reliability of the research is provided by application of valid and reliable research methods chosen for solution of the defined objectives of the research, the research sample size and the mathematical-statistical data analysis.

The structure of the dissertation. The work consists of an introduction, three chapters, bibliography (176 sources) and 2 appendices. 12 tables, 7 diagrams, 4 charts and 3 pictures are included. The volume of the work is 171 pages.